



111. ԵՐԿՈՒ ԴՐԿԵՑ

Կէղնին-չէղնին էրկու դրկեց կէղնին, էն մեկ շինական դրկեց
այրեն կը կրեր, ճամպին սել կը շրջի, խրձեր կը ցլըրվին, մնա շի-
վար: Դրկեց յետեեն դիկա, կօղնե, դսել կը բառնան, գընկնան
ճամպա:

— Ի՛մալ է,— կըսե դրկեց,— օր ես չէղնե՞նք, դու մինակ կըո-
նե՞ր դսել բառնեք, հը՞:

— Շնոխկալ ինք,— կըսե սելի տեր,— հալբաթ մինակ մարդ
չըկոնա սել բառնա:

Քիչ մե կէրթան:

— Հը՛, ի՛մալ է, տեսա՞ր իմալ քըղի օգնեցի, դսել բառձանք:

— Ըպա դրկեցութեն էլ ընչի՞ է, օր նեղ տեղ չիրարու չօգնին:

Փշում մե կէրթան:

— Հը՞, ես օր չէղնե՞նք՝ դու դսել շա՛տ կը բառնեք:

Սելի տեր կը տեսնա, օր գրկեց զչափ գընցու, ձեն կիտա.

— Հո՛ո՛, գմշտան, կե՛ցեք:

Սելի տեր ուր ձեռքով դսել կը շրջե, ղխրձներ կը ցրվե, կը դառ-
նա դրկցին.

— Ա՛խպեր, քու ձեռքեն պրծա՞նք,— կըսե,— ի՛մալ էկեր իս.
հմալ գնա քու ճամպեն, չըսօրվընե քու օգնութեն ընձի պետք չէ, քու
գլուխն ուտե, հողիս բերանսխը բերեցիր:

